ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունիսի 14-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/02» պայմանագրում 2021 թվականի նոյեմբերի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխությունների առաջացման պատճառ՝

Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ 975 204 (ինը հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր չորս) ՀՀ դրամի չափով:

Փոփոխությունների նկարագրություն՝

Նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում պայմանագրի N 1 հավելվածով՝ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎՈՎ նախատեսված աշխատանքներից կատարման նպատակով առանձնացվել են համաձայնագրի հավելված N 1-ով սահմանված աշխատանքները:
Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխությունների հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/02» 14.06.2021թ. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» նոյեմբերի 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Խ.Ղազարյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինարար-97» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հ. Ահարոնյանի (այսուհետ՝ Կապալառու), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 14.06.2021թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/02» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ **975 204 (ինը հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր չորս)** ՀՀ դրամի չափով, որի շրջանակներում Պայմանագրի N 1 հավելվածով՝ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎՈՎ նախատեսված աշխատանքներից կատարման նպատակով առանձնացվում են Համաձայնագրի հավելված N 1-ով սահմանված աշխատանքները:

1.2 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը 15.10.2021թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև Համաձայնագրի կնքվելը Կապալառուի կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարումն իրականացվում է Պայմանագիրը և Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***«Շինարար-97» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 05510886
ՀԾ՝ 900011025757	ՀԾ՝ 163527033183
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Շիրակի մ/ճ
Ղեկավարի պաշտոնակատար՝ Խ. Ղազարյան	Տնօրեն՝ Հ. Ահարոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » նոյեմբերի 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՑԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6
	Տանիք				
	Կառուցողական աշխատանքներ				
3	Արտաքին ջրհորդանների իրականացում ցինկապատ հարթ թիթեղով t=0.55մմ,(թիթեղի գումարային լայնությունը b=1800մմ)	գմ	92.119	6753	622080
5	Ջրհոսի իրականացում հարթ ցինկապատ թիթեղով (b=1600մմ, δ=0.55մմ)	$մ^2$	24.000	6955	166920
	ԸՆԴԱՄԵՆԸ				**789000**
	Ընդհանուրը				**789000**
	Չնախատեսված աշխատանքներ 3%				**23670**
	Ընդամենը				**812670**
	ԱԱՀ 20%				**162534**
	Ընդամենը ամբողջը՝ ներառյալ ԱԱՀ-ն				**975204**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պաշտոնակատար՝ Խ. Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար-97» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Տեքստիլագործների 29/3
ՀՎՀՀ՝ 05510886
Հ/Հ՝ 163527033183
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Շիրակի մ/ճ

Տնօրեն՝ Հ. Ահարոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
« 12 » նոյեմբերի 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 3
« 14 » հունիսի 2021 թ. կնքված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/02» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/506	ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրի քաղաքի նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ	975 204	975 204	**975 204**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պաշտոնակատար՝ Ա. Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Շինարար-97» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
ՀՎՀՀ՝ 05510886
Հ/Հ՝ 163527033183
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Շիրակի մ/ճ

Տնօրեն՝ Հ. Ահարոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.